Արձանագրություն N 2

«ՀՀՍՄԱ-ԷԱՃԱՊՁԲ-2023/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Աղբատար մեքենայի ձեռքբերում

ք. Կապան «28» նոյեմբեր 2023թ.
Ժամը 15.00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝	Կ. Բալյան
գնահատող անդամներ՝	Է. Միրզոյան
	Ա. Արզումանյան
հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Դավթյան

<u>«ՀՀՍՄԱ-ԷԱՃԱՊՁԲ-2023/2» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման և աճուրդի արդյունքների ամփոփման մասին</u>

(Կ. Բալյան)

1.1 **<u>«ՀՀՍՄԱ-ԷԱՃԱՊՁԲ-2023/2» ծածկագրով գնման ընթացակարգի</u>** գնահատող հանձնաժողովի նախագահ Կ. Բալյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հայտերը բացվել են էլեկտրոնային համակարգի (eauction.armeps.am) միջոցով՝ նոյեմբերի 27-ին, իսկ հակադարձ աճուրդը տեղի է ունեցել նեյեմբերի 28-ին ժամը 15:00-ին:

1.2 Մրցույթին հայտ են ներկայացրել հետևյալ **մասնակիցները.**

h/h	Կազմակերպության անվանումը	Կոնտակտային տվյալներ
1	«ԳԵՆԿՈՆ» ՍՊԸ	ՀՀ, գ. Մասիս, Բ. Մարտիրոսյան 23փ Էլ. փոստ՝ *genkon84@mail.ru* Հեռ.՝ 041 999 660
2	«ՄԵԳԱՄՈԹՈՐՍ» ՍՊԸ	ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Առինջ, Երևան-Սևան մայրուղու աջակողմյան հատված Էլ. փոստ՝ *megamotors2008@gmail.com* Հեռ.՝(+374) 10 200 000

1.2 Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

h/h	Մասնակիցների անվանումը	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային ընդհանուր գին/գնման գին	Արժեք առանց ԱԱՀ, /ՀՀ դրամ/	ԱԱՀ /ՀՀ դրամ/	Ընդհանուր գին ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/
1	«ԳԵՆԿՈՆ» ՍՊԸ	Աղբատար մեքենայի ձեռքբերում	61.000.000	45.450.000	20%	54.540.000
2	«ՄԵԳԱՄՈԹՈՐՍ» ՍՊԸ			47.752.000	20%	57.302.400

2. Տեղեկություն՝ բացված յուրաքանչյուր փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պահանջների համապատասխանության մասին
(Կ. Բալյան)

2.1 Ներկայացված հայտերում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերն առկա են:
2.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման պահանջներին՝ **բացառությամբ:**

Մասնակցի անվանումը	Անհամապատասխանության նկարագրությունը/**շտկման ենթակա/**
«ԳԵՆԿՈՆ» ՍՊԸ	**1.Հստակեցնել տեխնիկական բնութագիրը**՝ նշված է աշխատանքային ծավալ, 6.00-6.65լ, շարշիչի հզորությունը՝ 280-330ձ/ուժ, փոխանցման տուփը՝ 7-9 աստիճան: 2. Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված չէ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և մակնիշը՝ նշված է աղբատար մեքենա, իսկ արտադրողի տողում հստակ նշել, թե որ արտադրողի կողմից է լինելու նշված ապրանքը: 2. Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում կայքէջի հղումը կիսատ է գրված: 3. Հավելված 1.3 –ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

3. Ուսումնասիրելով ներկայացված բնութագրերը գնահատող հանձնաժողովն որոշեց.

3.1 Մասնակցին՝ «ԳԵՆԿՈՆ» ՍՊԸ **-ին** ծանուցել անհամապատասխանության շտկման մասին:
3.2 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ առաջարկելով մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը (եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը):
3.3 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշման 67-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.06.2023 թվականի № 03/26-1/12074-2023 գրությունը, պատվիրատուի ղեկավարի որոշմամբ հարցում է ուղարկել ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ «ԳԵՆԿՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված կանխիկ փողի ձևով հայտի ապահովման իսկությունը ստուգելու նպատակով:
3.4 Շտկված փաստաթղթերն կցել համակարգ:
3.5 Նիստը վերսկսել շտկված փաստաթղթերը ներկայացնելուց և ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից պատասխան ստանալուց հետո հաջորդ աշխատանքային օրը, ժամը՝ 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի՝

նախագահ _____ Կ.Բալյան

գնահատող անդամներ _____ Է. Միրզոյան

_____ Ա.Արզումանյան

քարտուղար՝ _____Ն. Դավթյան